ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.05.2020թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Դավիթ Նահատակյան /գնահատող/

Արմեն Հակոբջանյան /բացող/

Սամվել Մուսոյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	<<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ	al-maska@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

5.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝
- հավելված 1 դիմում-հայտարարության մեջ գործունեության հասցեն լրացված է թերի, ինչպես նաև ծածկագրերից մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,
- լրացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին:

6. Մասնակցի առաջարկած գինը.

6.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակցի անվանումը	
		<<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	**23 758 580**	20 000 000	24 000 000*

* գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը

7. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 41-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը առաջարկելով <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ.մայիսի 13-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման նիստը շարունակվեց 13.05.2020թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Դավիթ Նահատակյան /գնահատող/

Արմեն Հակոբջանյան /բացող/

Սամվել Մուսոյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

8.1 <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Հայտի ապահովումը ներկայացնելու վերաբերյալ

9.1 <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/ պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը՝ բանկային երաշխիքի ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.Գնահատման արդյունքների վերաբերյալ.

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 42-րդ կետը <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով գնահատող հանձնաժողով՝

_____ Կարեն Սիմոնյան

_____ Հրանտ Հովսեփյան

_____ Դավիթ Նահատակյան

_____ Արմեն Հակոբջանյան

_____ Սամվել Մուսոյան

_____ Անուշ Մարգարյան